

ԿԱՐԾԻՔ

Ը. 00.08 – «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Ամասյա Արմենի Ղազարյանի «Տնտեսամաթեմատիկական մոդելավորումը դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Դրամավարկային քաղաքականության (ԴՎՔ) իրականացման գործընթացը գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո ուղղված է կենտրոնական բանկերի գործառնական նպատակի իրագործմանը և հանդիսանում է առանցքային միջոց կարճաժամկետ տոկոսների կառավարման հարցում:

Այն գործիքները, որոնք կիրառվում են կենտրոնական բանկերի կողմից՝ դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացում, ունեն բարդ կառուցվածք և ազդեցության բազմակիություն, ուստի վերջիններիս մաթեմատիկական մոդելավորումը հնարավորություն է տալիս համապարփակ գնահատելու գործիքների կիրառման ազդեցությունը և հնարավոր առանձնահատկությունները:

Սույն ատենախոսության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ զարգացող տնտեսության պայմաններում տնտեսության համար առավել կարևոր է դառնում կենտրոնական բանկերի կողմից գնաճի նպատակադրման արդյունավետ իրականացումը, որի համար առանցքային նախապայման է համապատասխան գործիքակազմի կիրառման արդյունավետությունը: Նշված գործիքակազմի մաթեմատիկական մոդելավորումը հնարավորություն է տալիս գնահատել այդ գործիքների կիրառման առանձնահատկությունները՝ ներկայացնելով առաջարկներ արդյունավետության բարձրացման համար:

Չեղանկատության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակն է վերլուծել դրամավարկային քաղաքականության իրականացման տնտեսամաթեմատիկական մոդելավորման առանձնահատկությունները, ինչպես նաև ներկայացնել առաջարկներ, որոնք կարող

են նպաստել դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Նպատակն իրագործելու համար հեղինակի կողմից առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել ԴՎԶ իրականացման միջազգային պրակտիկան և գիտական աշխատանքները, ՀՀ ԴՎԶ իրականացման հայեցակարգի որոշ առանձնահատկություններ:
- Ուսումնասիրել ԴՎԶ ավանդական գործիքների առանձնահատկությունները, առևտրային բանկերի՝ կենտրոնական բանկում թղթակցային հաշիվների կառուցվածքը, բանկային համակարգի իրացվելիությունը, ավտոնոմ գործոնները, վերջինների կանխատեսման որոշ առանձնահատկություններ, միջբանկային շուկայում պահանջարկի տարբեր մոդելներ:
- Վարկային սպրեդի գնահատման ռիսկից զերծ տոկոսադրույք ներառող մոդելի միջոցով վերլուծել ԴՎԶ իրականացման որոշ առանձնահատկություններ, որոնք կարող են առնչվել միջբանկային շուկայում կոնտրագենտի ռիսկի հետ:
- Իրականացնել վերլուծություն գրավի չափանիշների կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ:
- Վերլուծել պարտադիր պահուստավորման գործիքի նորմի օպտիմալ մակարդակի որոշման առանձնահատկությունները:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ներածությունում ներկայացվել են թեմայի արդիականությունը, ատենախոսության հիմնական նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հետազոտության գիտական նորույթ համարվող արդյունքները, ինչպես նաև ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության **առաջին՝ «Դրամավարկային քաղաքականության իրականացման առանձնահատկությունները»** գլխում ներկայացվել են դրամավարկային քաղաքականության և դրա իրականացման միջև տարբերությունները, ինչպես նաև կենտրոնական բանկերի կողմից դրամավարկային

քաղաքականության իրականացման համար կիրառվող ավանդական գործիքները և վերջիններիս կիրառման առանձնահատկությունները

Ատենախոսության երկրորդ՝ «Դրամավարկային քաղաքականության իրականացման մոդելներ» գլխում ուսումնասիրվել է դրամավարկային քաղաքականության իրականացման համար կիրառվող գործիքների տնտեսամաթեմատիկական մոդելավորման հնարավորությունները և յուրահատկությունները, ինչպես նաև առաջարկվել են որոշակի խնդիրների մոդելավորման մոտեցումներ

Ատենախոսության երրորդ՝ «Որոշ արդյունքներ դրամավարկային քաղաքականության իրականացման տնտեսամաթեմատիկական մոդելավորումից» գլխում ներկայացվել են երկրորդ գլխում քննարկված հիմնական մոդելների թվային գնահատականները և կիրառությունները: Մասնավորապես ցույց է տրվել միջբանկային շուկայում ավելցուկային իրացվելիության պահանջարկի մոդելի արդյունքները ՀՀ տնտեսության համար, պահուստավորման օպտիմալ մակարդակի գնահատումը Տաջիկստանի Հանրապետության օրինակով, ինչպես նաև վարկային սպրեդի առաջարկվող մոդելի և միջբանկային շուկայում ավելցուկային իրացվելիության մոդելի արդյունքների համակցման միջոցով գնահատվել է կոնտրագենտի ռիսկը ՀՀ բանկային համակարգում և վերջինիս զսպման համար իրացվելիության տրամադրման անհրաժեշտ մակարդակը:

Եզրակացություններում ներկայացված են ատենախոսության հիմնական արդյունքները:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսը, որպես հետազոտությամբ ստացված գիտական նորույթ, պաշտպանության է ներկայացրել հետևյալ դրույթները.

- Մշակվել է պարտադիր պահուստավորման օպտիմալ մակարդակի գնահատման մոտեցում, որի կիրառությունը ցույց է տրվել Տաջիկստանի Հանրապետության օրինակով:
- Առաջարկվել է կենտրոնական բանկի գործառնություններում գրավի չափանիշների վերաբերյալ քաղաքականության իրականացման կառուցակարգ և վերջինիս մոդելավորում ոչ հստակ բազմությունների տեսության միջոցով

- ՀՀ տվյալներով գնահատվել է ավելցուկային իրացվելիության պահանջարկի մոդել
- Առաջարկվել է վարկային սպրեդի գնահատման մոդել
- իրացվելիության պահանջարկի և վարկային սպրեդի մոդելների համակցման միջոցով մշակվել է կոնտրագենտի ռիսկի մակարդակի քանակական գնահատման մեթոդաբանություն.

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը գերծ չէ թերություններից.

1. Ատենախոսության առաջին գլխում ներկայացված են նաև մակրոպրոլեկցիալ քաղաքականությունը և վերջինիս գործիքները, սակայն աշխատանքում բացակայում են վերլուծություններ այդ գործիքների և դրամավարկային քաղաքականության իրականացման գործիքների միջև կապի վերաբերյալ:
2. Ատենախոսության երկրորդ գլխի մեջ իրացվելիության ավելցուկային պահանջարկի մոդելում դիտարկվել է միջբանկային շուկայում ավելցուկային իրացվելիության ծավալի և տոկոսադրույքի միջև կապը, սակայն ներկայացված չեն գնահատականներ տոկոսադրույքի վրա ազդող ծավալին չառնչվող մեծությունների վերաբերյալ:
3. Ատենախոսությունում վերլուծություն է իրականացվել նաև Տաջիկիստանի Հանրապետության Ազգային բանկի տվյալների հիման վրա: Անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչու են օգտագործվել նաև այդ տվյալները, առավել ևս, որ Տաջիկիստանը ԵԱՏՊ անդամ չէ:
4. Հատկապես անորոշության պայմաններում նպատակահարմար է իրականացնել միջակայքային գնահատականներ, սակայն պետք էր հստակ ներկայացվեր, ինչպես են այդ գնահատականները իրականացվել, ինչպես կփոխվե՞ն դրանք վերաֆինանսավորման տոկոսադրույքի զգալի փոփոխության դեպքում, և որ դեպքում փորձագիտական գնահատականները կարող են շեղվել այդ միջակայքերից:
5. Երրորդ գլխում հեղինակը ներկայացրել է կոնտրագենտի ռիսկի գնահատման հաշվարկը՝ հիմնվելով երկրորդ գլխում առաջարկվող վարկային սպրեդի մոդելի վրա, սակայն նկարագրված չէ, թե նշված ռիսկը ինչպես է կապված այլ գործոնների, օրինակ, բանկային համակարգում կենտրոնացվածության հետ:

Եզրակացություն


Վերոնշյալ դիտողությունները չեն նվազեցնում հետազոտության արդյունքների արժանիքները:

Ընդհանուր առմամբ Ա. Ա. Ղազարյանի ատենախոսությունը ունի գիտական կիրառական նշանակություն, որում դրված և լուծված են տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ:

Ատենախոսի կատարած աշխատանքը արտացոլված է 3 գիտական աշխատանքներում, որոնցից մեկը ընդգրկված է Scopus ցանկում, իսկ մյուս 2-ը հրապարակվել են ԲԿԳԿ-ի սահմանած ցուցակում ընդգրկված գիտական հրատարակություններում:

Ամսայա Արմենի Ղազարյանի «Տնտեսամաթեմատիկական մոդելավորումը դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը. 00.08 – «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  Ա. Ա. Թավադյան

Պարոն Ա.Ա. ԹԱՎԱԴՅԱՆԻ ստորագրությունը հաստատում են՝

Հայ-ռուսական համալսարանի գիտական քննադատական
բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր 



06.09.2025